Հայաստանին օդի որակի մոնիթորինգի համակարգի տրամադրման ծրագրի հայտագրերի փոխանակման ստորագրման արարողությունը

Սեպտեմբերի 29-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում տեղի ունեցավ Ճապոնիայի կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև «Տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրի» դրամաշնորհային աջակցության վերաբերյալ հայտագրերի փոխանակման ստորագրման արարողությունը:

Հայտագրերը ստորագրեցին դեսպան Աոկի Յուտական և ՀՀ շրջակա միջավայրի նախարար պարոն Համբարձում Մաթևոսյանը:

Այս ծրագիրը 1.7 միլիոն ԱՄՆ դոլարի չափով աջակցություն է, որի շրջանակներում ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը կտրամադրվեն օդի աղտոտվածության մոնիթորինգի սարքավորումներ: Ծրագիրը հնարավորություն կտա իրականացնել օդի աղտոտվածության շարունակական և համակարգված մոնիթորինգ, բարելավել տվյալների որակը և կանխատեսման հնարավորությունները:

Իր ելույթում դեսպան Աոկին նշեց, որ Ճապոնիան մինչև 1970-ական թվականները տուժել է օդի խիստ աղտոտվածությունից, և այդ ժամանակից ի վեր Ճապոնիան մշակել է օդի մոնիթորինգի առաջադեմ տեխնոլոգիա: Նա հույս հայտնեց, որ ճապոնական տեխնոլոգիան և փորձը կարող են նպաստել Հայաստանի օդի աղտոտվածության հետ կապված խնդիրների լուծմանը:

Դեսպան Աոկիի ելույթը

Հայտագրերի ստորագրումը



Հայտագրերի փոխանակումը Նախարարի եզրափակիչ ելույթը